

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉԱՆ

ԱՅՍՕՐՎԱ ԼԱԶԻՆԸ ԱՆՑՅԱԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՂԱՀԵՃՔ ԳԱՎԱՌՆ Է

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.179

ԱՄՓՈՓՈՒՄ

1893 թ. Վենետիկում լույս է տեսնում ականավոր բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, բանաստեղծ ու թարգմանիչ Ղևոնդ Ալիշանի «Սիսական» (Տեղագրություն Սիւնեաց աշխարհի) աշխատությունը, որը գրաբարով 562 էջ է:

«Երկոտասան գաւառս Սիւնեաց համարին ամենայն պատմիչք մեր և աշխարհագիրք, յորոց հնագոյնն (*Մովսես Խորենացի*) յարևմտեան սահմանաց աշխարհին սկսանի թուել և դասել» (Ալիշան Ղ., 1893):

«Սիսական» գրքում *Աղահեճքը* ներկայացված է որպես 6-րդ գավառ: Գրքի շարադրանքը մանրագիր գրաբար է¹:

Այժմ քննարկվող հարցի կնճռոտ կողմն այն է, որ կլինի կարծիքների բախում. *Աղահեճքը* (*Լաչինը*) պատմականորեն հայկական տարածք է, թե՞ այլազգիների:

Ուստի Ղևոնդ Ալիշանի գրածը ընթերցել կարողացող ցանկացած անձնավորություն օբյեկտիվորեն կհանգի ճշմարտության:

Բանալի բառեր և արտահայտություններ. Ղևոնդ Ալիշան, Սյունյաց գավառ, Լաչին, Աղահեճք, գյուղեր, Ծիծեռնավանք, Խծաբերդ, հայկական տարածք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

¹ Գրքի «Հաբանք», «Աղահեճք», «Արևիք» գավառների գրաբար տեքստերը լիովին և «Ծղուկ» գավառի «Տաթև», «Լորածոր» հատվածները թարգմանել՝ արևելահայերենի եմ վերածել. բացի «Աղահեճք»-ից՝ մյուսները տպագրվել են գիտական հանդեսում, թերթերում:

Ալիշանի վկայած *Ջանքանակյան* վտակը շրջակա գյուղերում՝ *Արփա-գետուկ, Խծաբերդ, Պետրոսաշեն, Սպիտակշեն, Թեգխարաբ, Զինգյա՝* նա՛ կապ գետ էին համարում, որը գյուղերի տարածքային սահմանների բաժանման գիծ էր դիտվում՝ աջում *Արփա-գետուկն* էր, ձախում՝ *Խծաբերդը*:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը շարադրված է պատմահամեմատական, պատմանկարագրական և վերլուծական մեթոդաբանությամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Աղահեճքի տարածքային-աշխարհագրական կառուցվածքը՝ լեռները, անտառները, գետերը, վտակները, ձորերը, աղբյուրները, բարձունքները, բնակավայրերը՝ գյուղերը, հանգրվանները, եկեղեցիները, վանքերը, մզկիթները, հայերի, հայկական և այլազգիների անունները, բուսականությունը, կամուրջները և այլն, մանրակրկիտ բնութագրված և տեսանելի են դարձված:

Աղահեճք գավառը գտնվում էր *Աղուան* կամ *Աղավնո* գետի (այժմ՝ *Հագարի*, այլազգիների լեզվով՝ *Հաքարա-չայ*, այլև *Հաքյառլու*) վերին հոսանքի տարածքում: *Սյունիքի* 6-րդ գավառը՝ 1402 քառ. կիլոմետր տարածքով, ընկած էր *Սյունիքի* հյուսիս-արևելյան մասում, սահմանակից էր *Արցախի Ծար, Սյունիքի Ծղուկ* և *Հաբանդ* գավառներին:

Այնտեղ ոչ սակավ ձորեր և վտակներ են նշվում, որոնք իջնում են արևելքից՝ գավառն անջրպետող *Շուշվա* լեռներից, որոնցից առաջինը, որը հյուսիսից դեպի հարավ էր գնում, *Մելիք*-ն է, որ խառնվում է մեծագույն *Մուսուլմանին*, որի աղբյուրների ակունքներում ամուր հանգրվաններ կան՝ *Րիճան, Մուսուրմանլար, Ճամպերախաչ* (գուցե *Ճամբարախաչ*), *Գարագըշլագ, Քեշիշքենյո, Տայղան* գյուղ՝ 3708՝ բարձրությամբ:

Երկրորդ վտակը *Խանալի* անունով է, նրա հարավից մյուս վտակն անանուն է, որի մոտ *Հարար* գյուղն է. այս գյուղում մի ավետարան է գտնվում՝ գրված 1668 թ.՝ *Աղվանքի* կաթողիկոսի եղբայր *Մատթեոսի* մասին, որ բնակվել է *Կտիչ* (Գտիչ) վանքի մոտ:

Հարարի և Մուսուլման գետակի միջնամասում՝ Ագարայի գետեզերքին մոտ, Չինարի, Սոֆիան գյուղերն են և Տեկիրմեն, Գուշիլար, Մախսումլու հանգրվանները և այլն:

Հարավից՝ Հարարի վտակի վերջից, կա մեծագույն վտակ, որ կոչվում է *Ջանքանակյան²*, որն իր մեջ ընդունում է բազմաթիվ վտակներ կամ աղբյուրներ վերին կողմում (արևելքից), որտեղ նշվում են ամրոցներ կամ բազում հանգրվաններ, ինչպես՝ աջից կամ արևմտակողմում՝ *Դաշ-ալդը, Էլիճա՝ 6630՝* բարձրությամբ համանուն լեռան ստորոտներում. Հարարին մոտ՝ *Արփա-կեպիք, Փառաճան, և ձախից՝ Խոզաբերդ* գյուղ. վերջին այդ երկու հայանունները [*Փառաճան, Խոզաբերդ*] չեն հիշվում Սյունյաց աթոռի հարկատուների ցուցակներում և այլ տեղերում (**Ալիշան Ղ., 1893**):

Սրանց մոտիկ՝ երկայնաձիգ *Ճաղալուս* լեռն է, և նրա հարավից՝ 6260՝ [բարձրությամբ] *Թոփաղաճ* լեռը և *Խաղ* գյուղը:

Այս ձորագետի [*Ջանքանակյանի*] հարավից ձգվում է մյուս [ձորագետը]՝ նրան հավասար, բայց սակավաշեն է, որի գլխում [վերևում]՝ *Խոզաբերդի³* հարավից՝ բարձրանում են երկայնանիստ *Չեմեն* լեռը և *Պոզալ-տաղ* կոնաձև լեռնակը, որոնց վերջից՝ Արցախական գավառների լեռնասահմաններում

² *Ալիշանի* այս անվանումը և նրա հետ առնչվող տվյալները՝ վտակ, աղբյուր, ամրոց, հանգրվան, լիապես համապատասխանում են իրականությանը, ճշմարիտ են նաև արևմտակողմում *Դաշ-ալդը, Էլիճան՝ 6630՝* բարձրությամբ, և Հարարին մոտ *Արփա-կեպիք* ու *Փառաճան* և ձախից՝ *Խոզաբերդ* գյուղը:

³ Նույն *Առաքել վարդապետը*՝ ըստ մի գրչի շարադրանքի, ներկայացնում է նաև այն բնակատեղը, որ *Օձաբերդ* ավան են կոչել. այն գավառը կոչվում է *Ագարի* [Աղահեճքի Ագարին է], որտեղի գավառապետը եկեղեցաձորցի էր՝ անունը *Վարդան*, կնոջ անունը՝ *Եղիսաբեթ*, որոնք երկար տարիներ այնտեղ էին՝ անպտուղ և անզավակ...: Զոհեր և պատարագներ էին մատուցում սուրբ նահատակ *Գրիգորիսին*, խնդրում, որ զավակ ունենա: Այդպես էլ լինում է. տղա է ծնվում, կոչում են *Գրիգոր*: Գիշերը հրեշտակը սրանց ասում է, որ *Գրիգորը* մեռնելու է օձահարությունից: *Վարդանը* 40 ոտնաչափ բարձր, 10 ոտնաչափ լայն աշտարակ է սարքում, դրսից ասեղ էլ չէր մտնում, անվանում էին *օձաբերդ*. դա էլ անցել է գյուղին՝ *Օձաբերդ*:

Բարբառի խոսվածքում օրինաչափ փոփոխություն է գործել. *օձ-ը օխց* է արտասանվել, հետևապես *Օձաբերդը՝ Օխցաբերդ*: Օ-ի անկում եղավ՝ *խցաբերդ*. *ց* և *ծ* առաջնային խուլ բաղաձայններ են՝ *ց=թս, ծ=տս*. հնչակից են, կարող են փոխարինվել, որից՝ *խծաբերդ*:

Գինաթաղար հանգրվանը կամ ամրոցն է, որը հայտնի է դարձնում Հաբանդ գավառի Գինեթաղք գյուղը:

Մյուս ծորագետում ևս, որ սրա [երկրորդ ծորագետի] հարավում է, նշվում են Պաշալեդ հանգրվանը և Գոմշեճուպան աղբյուրը: Այս երկուսի միջում՝ Ագարայի եզերքում, կան ամուր գյուղեր՝ Մուրադխան, Խանտեք, Պալիսուդանի, Ճիճիք:

Ղևոնդ Ալիշանի՝ Աղահեճքի հարավ-արևելյան ծայրամասային այս տարածքի դիտարկումներից մի անչափ կարևոր եղելություն արձանագրված չէ: Այժմ դա ներկայացնել է պետք լրացման կարգով:

Զինգյա՝ նա՝ կապ գետի վերին ակունքում՝ աջ ափին, վեր է խոյացել այդ տարածքի ամենամեծ ու ճանաչված եկեղեցին, տարածքը կոչվում էր *Եկեղեցաձոր*, որ Հայաստանին մոտ և կից էր համարվում, սկզբում 1600 բնակիչ ուներ: Սարի հետևի քրդաց ազգը նրանց բուն թշնամին էր. հայերը շատ էին և հաղթական, քաջ և անհաղթ, նեղում կամ նրանց մանուկներին ծառա էին դարձնում: Օձերը դարանակաված սպասում էին հարվածելու հնար գտնել: Գարնան ծաղկազարդի տոնին զինված խմբերով շրջապատում են, նախ տղամարդկանց կոտորում, հետո մյուս բոլորին, թալանում, կողոպտում են, հեռանում: Ողջ մնացածները, որ օձաբերդցիներ (խճաբերձցիներ) էին, գնում են Տող գյուղը, որին հարկատու էին: Շուշին կառուցված էր, անցնում են նրա մի քարաժայռի տակ, բնակվում՝ կոչվելով *Քարենտակի* բնակիչներ: Այս բոլորը պատմում է Գորիչ վանքի վարդապետ Առաքել Կոստանդյանցը: Ըստ արձանագրության՝ Ագարայի եզերքում էլի գյուղեր կան՝ *Խոճիկ*, *Էֆենտիլեր*, *Տանլիլեր*, *Վերին* և *Սյորրին Ռաշիտ*, *Մաֆրուզլու* և *Քյուրտ Մաֆրուզլու*: Ավելի նշանավորը Ագարա գետի և Արցախի լեռնասահմանների մի լեռան ստորոտում *Թումաս* կամ *Թումասլու* գյուղն է, կա և *Դադ-Թումաս* լեռ՝ 4836', սրա հարավից՝ *Թումաս-գյումպեզ*, որ թվում է մզկիթ է և մահմեդականների ուխտատեղի: Ագարա գետի հետին մասում՝ աջ գետեզեր շուրջը գյուղեր կան՝ *Գարագիլխե*, *Սորալ* գյուղիկ, *Ռապլանդ*, *Թաթար*, Սարիլ, Խարալան, Շարոֆան և այլն:

Այսպես գյուղերի անուններ թվարկելով՝ *Ալիշանը* նշում է. «Բայց չեն ինձ յայտնեալ ազգային յիշատակք ի սուին» (**Ալիշան Ղ., 1893**)՝ սրանցում [եղած առկա] ազգային հիշատակություններն ինձ չեն հայտնել:

[Ուշագրավ է. քուրդ կա՝ *Քյուրդ Մաֆրուզլու*, թաթար կա՝ *Թաթար*] [էջ 270-ում կա *Արաբլու* հանգրվան]:

Աղահեճքի ամենանշանավոր կառույցը *Ծիծեռնավանքն* է, որը գավառի արևմտյան մասի ձորահովտում է, և այդ անունով գետ էլ կա, որի մասին *Ալիշանը* գրում է. «Գլուխ ձորահովտին (գորոյ ոչ գիտեմ հին անուն, այլ ախորժեմ անուանել *Ծիծեռնավանուց* գետ կամ *Խոժոռաբերդոյ*) միջասահման է երից գաւառացոյ, *Ծղկայ*, *Աղահեճոյ* և *Հաբանդայ*» (**Ալիշան Ղ., 1893**). Ձորահովտի վերև հին անունը չգիտի, բայց ցանկանում է կոչել *Ծիծեռնավանքի* կամ *Խոժոռաբերդի* գետ, որը երեք գավառներիդ՝ *Ծղուկի*, *Աղահեճի* և *Հաբանդի* միջասահմանն է: Այլազգիներն այն անվանում են *Ագօղլան գետ* [*Ագօղլան* = *Սպիտակ տղա*]:

Ծիծեռնավանքի վերջին կողմից՝ *Ծղուկի* և *Հաբանդի* սահմաններից, բազմաթիվ վտակներ գալիս խառնվում են գետին, քիչ գյուղեր նշանակված են *Հաբանդ* գավառի հաշվի մեջ, կարգված էին հին ցուցակում, դրանք երկուսն են՝ *Պայինդուր*, *Խոնաձախ*: Բայց ավելի վեր՝ արևմտյան կողմը, վանքին ավելի մոտիկ, *Խոզնավար* կամ *Խազնավար* գյուղն է, հին ցուցակում չկա, ունի *Ս. Մինաս* եկեղեցի, հայ բնակիչները մոտ 70 տուն են, 30 տուն՝ այլազգիներ: Գյուղը ձորակում է, երկու կողմից լեռներ, նեղ և մշակության սահման: Հայազգիները այլ գյուղերից գաղթել են այդտեղ, գլխավոր ընտանիքներ՝ *Միրզաբեկյան*, *Հարությունյան*, *Մելիք Եգանյան*, *Բահադրյան*:

Ճոխ ձորահովիտ է նաև *Հոջանցը*, որ շրջապատված է լեռներով՝ *Գարանլըգ* (*Մթին*), *Գարասու պաշի*, *Չարազլու* սարը, բազմաթիվ գյուղեր են՝ *Աղճաքենյու*, *Առնավուր*, *Արապլու* բերդիկ, *Սոուգ-պուլագ* (*Ցուրպի՝ սառն աղբյուր*), *Քաշաթաղ*, *Հոջաս* (*Հոջանք*, *Հոջանց*), *Հոջես* և այլն:

Օսմանյանների պատերազմների ժամանակ՝ *Մուրադ IV*-ի օրոք, *Շահ Սեֆիի* դեմ (1635թ.), երբ *Երևանի* պարսիկ կուսակալ *Թահմազ Ղուլին*, չվստահելով նրանց դեմն առնել, թույլ տվեց ժողովրդին գաղթել ուր և կամենան:

Կարբի գյուղի ժողովուրդը միանգամից ելավ դիմեց դեպի *Քաշաթաղի* երկիրը, հասան մինչև *Հոջես* գյուղը: Այնտեղ սև վրաններով բազմաթիվ քրդեր էին բնակվում և երբ տեսան փախստականներին՝ կարբեցիներին, հարձակվեցին, հինգ տղամարդու սպանեցին, կողոպտեցին նրանց, կանանց մերկացրին՝ հասցնելով վերջին թշվառության:

Կարբեցիներից մեկը՝ *Ժանտենց Միրզան*, լսում է կատարվածի մասին (*Թավրիզում* էր), գրավոր դիմում է *Շահին*, և *Շահը* զորք է ուղարկում քրդերի դեմ. գնում ջարդում են, կողոպտում քրդերին, փրկում գերի մանուկներին, թալանվածը տալիս կարբեցիներին, ազատում: Կարբեցիները մնում են այնտեղ, ապա վերադառնում են իրենց գյուղը՝ Կարբին:

Մանրակրկիտ բնութագրման են ենթարկված նաև *Ագարու* ձորահովիտները. «յառաջ քան զխառնուրդ *Հօջանց* գետոյն ընդ բուն գետն *Ագարու*, յերիս կամ չորիս գետակս բաժանեալ է սա առանձնակ ձորակօք, որոց արևմտագոյնն և զուգընթաց *Հօջեսի* կոչի *Նարվան-չայ*. գետդեանն հուպ առ գետեզերքն են, սկսեալ հիւսիսոյ, *Ղաուշուխ*, *Ազիզ-փաղեասի* ? *Ջօս-քեշիշ...*» (**Ալիշան Ղ., 1893**):

Հարավում վեր է խոյանում *Քեշիշ թեփե* լեռը՝ 7100' բարձր:

Ձորահովտի հարավ-արևմուտքից *Քուրդխաճին* է, հյուսիսարևելքից՝ երկու ձորագետերի անջրպետ(ող)ների մեջ, հառնում է *Արփա-կեփիք* լեռը՝ 6475, ինչպես և գետի ձախից՝ *Շարքարը*՝ 6570' բարձր: Այս կողմում *Ավադ* գյուղն է և համանուն հանգրվանը, հարավից բարձրանում է *Չիլլաս* լեռը՝ 6540' բարձր: *Ալիգուլի քենյ* մեծ գյուղը, *Ենկիճեն*, *Փիրճանը*, *Արաբլու* հանգրվանը, *Սեյիդլեր* գյուղը *Ագարայի* և *Հոջանցի* խառնարանների անկյունում են:

Ագարա ձորահովտի ձախակողմը ավելի ընդարձակ է, և նրա միջով հոսում են *Շուշվա* արևմտյան լեռներից իջնող վտակները: Լեռնակողմում գլխավոր գյուղը *Գալեփերեսին* է՝ 4480' բարձր, որը, ըստ հայերի, *Բերդաձորն* է (որ է *Բերդաձոր*

ըստ Հայոց (**Ալիշան Ղ., 1893**). անգլիացի ճանապարհագրող *Միկենեն* ևս նկատել է ու ներկայացրել աղավաղված ձևով՝ *Քարիանձոր*, *Pereanzour* (**Ալիշան Ղ., 1893**):

Ալիշանը *Լաչին* բառը գործածել է մեկ անգամ որպես լեռան անուն. «Յոյժ անտառամոլ են սահմանքն: -Ի Հս. Մ. *Քերդաձորոյ* ամբառնայ *Լաչին* լեռոն 5940՝ բարձր. և ի Հր. արևելից *Շաղնարար?* լեռոն 6460՝ բարձր. Առ գետեզերքն գետը» (**Ալիշան Ղ., 1893**)՝ սահմանները չափազանց անտառախիտ են: *Քերդաձորի* հյուսիս-արևմուտքում *Լաչին* լեռն է վեր խոյանում՝ 5940 մետր բարձր. և հարավ-արևելքից *Շաղնարար?* լեռն է՝ 6460 մ. բարձր. գետեզերքին գյուղեր են:

Ղևոնդ Ալիշանն իրավացիորեն օգտագործել է իրեն հայտնի տվյալները, որոնք բաղադրվում են ըստ հին և հետին՝ հետազայի ցուցակների: Ամեն բան ներկայացնում, բնութագրում է՝ գործածելով հակադրության մեթոդը՝ հին և հետին ցուցակներ, հայ-հայկական-հայություն և այլազգի-այլազգիներ (արաբ, քուրդ, թուրք, տաճիկ, մուսուլման, անգլիացի, օսման (յան), մահմեդական, թաթար):

Աղահեճք գավառը բնակչության պարունակության, ազգային պատկանելության իմաստով երկու տեսակ է եղել՝

1. Հին՝ հայկական և 2. Հետին՝ խառն՝ հայեր և այլազգիներ:

Սա հաստատվում է Ալիշանի վկայած փաստերով ու բովանդակությամբ:

Այսպես՝ 1. Աղահեճքի 43 գյուղեր *Սյունյաց* եկեղեցու հարկատուների ցուցակում են դասակարգված. այլազգի գյուղ չկա այդ ցուցակում, հարկը նշվում բեռներով: Հին Ցուցակում՝ *Ավժեն*-10, *Ձիասար*-6, *Որբորքոյ քար*-8, *Անեժ*-12, *Մարտակերտ*-6, *Արահուժ*-6, *Տանձուր*-7, *Մենի*-6, *Ծիծառնի* վանք-10, *Հացեաց* աղբյուր-12, *Հունչաք*-12, *Կարոհրինք*-12, *Քեղաձոր*-40, *Մարգք*- 10, *Հայելեակ*-6, *Հակ*-15, *Պոխոչոխ*-10, *Մախուլն*-10, *Արտանգետ*-12, *Սուրբ Գեորգ*-8, *Խրու*-8, *Մեղրի*-12, *Լսորք*-8, *Ծորացիք*-10, *Ականք*-8, *Խախձիք*-12, *Ագարակի* գետ-10, *Արվական*-6, *Շապոկի*-7, *Վժնաբերդ*-12, *Մշենի*-6, *Կարկասան*-6, *Հայրի*-8, *Քաշաթաղ*-6, *Պախախոնիք*-12, *Անուշավան*-12, *Վերին շեն*-6, *Մոշենք*-10, *Աղտառ*-6, *Շամրթա*-8, *Վասակակերտ*-12, *Արքո*-6, *Ազորոկ*-10:

Արանց ավելացնում է *հետին ցուցակներում հիշվածները Քաշաթաղում և Խոժոռաբերդում՝ Սթունիք, Աղվեսահագի, Եզնագոմեր, Փուլ, Սպիտակաջուր, Քարագլուխ, Շրվական, Խոզնավար, Հալաքս և թուրքանունները՝ Դաշլու, Աղճաքենյ, Յալխուզյամ, Ղուշճի, գուցե և մի քանիսը:*

2. *Աղահեճքի սկզբնական բնակիչները հայեր են եղել, դա երևում էր, ինչպես տեսանք՝ հին Ցուցակներից. այդպես էլ հին շինությունները. վանքերն ու եկեղեցիները, հիշենք Ծիծեռնավանքն ու նրա անունով Ծիծեռնավանք գետը, այլ եկեղեցիները: Այլազգիների անունով հին կառույցներ չեն նշվում: Իսկ օրինակ՝ 9-րդ դարի մի եկեղեցու մասին Ալիշանը նշում ունի. Դա արաբացու ոստիկանի որդու՝ Վլթա Փապոզուի՝ 847 թվականի արշավանքին պատահաձև է. նա Գանձակի կողմերից եկել էր Սյունյաց աշխարհը, գերեվարել շատերի սահմանները և իջել Աղահեճ գավառը՝ Արքունագետ կոչված ավանը, և իսկույն հրամայում է այրել Գրիգորիկ կոչված եկեղեցին Սուրբ, սակայն ձի հեծած մեկը դուրս է ելնում եկեղեցուց, իր զորքով փախուստի մատնում Եղջեր-խոռ սարը, որտեղից էլ կորչում են:*

3. *Ալիշանը նկատում է, որ Սյունյաց գավառների տերերը, իշխանները չեն հիշվում, այդպես էլ Աղահեճքի ոչ մի տեր կամ իշխան չի հիշվում, որ նշանակում է՝ գավառը վաղուց օտարացել էր Սյունյաց բնիկ տերերից և ընկել Աղվանից իշխանության տակ կամ մանավանդ այլազգիների բռնությունների տակ, որոնք խափանեցին ազգային հիշատակություններն ու վայելչագեղ ձորահովիտների վայելքները. «Իշխան կամ տեր Աղահեճոյ, որպէս այլոց գաւառաց՝ և ոչ մի յիշի, գրեալէ ոչ դեպք ինչ քաղաքականք, յորմէ կասկածելի է թէ վաղ ուրեմն օտարացեալ էր սա ի բնիկ տերանց Սիւնեաց, և անկեալ ընդ Աղուանից իշխանութեամբ, և կամ մանաւանդ ընդ բռնաբարութեամբ այլազգեաց, որք խափանեցին զազգային յիշատակս և զվայելս վայելչագեղ ձորահովտացն. յորոց յիշի միայն արշաւանք արաբացի ոստիկանի որդւոյ Վլթայ Փապոզու կոչեցելոյ, յամի 847» (Ալիշան Ղ., 1893):*

4. Օբյեկտիվորեն բնութագրելով *Աղահեճքի* աշխարհագրական կառուցվածքը՝ *Ալիշանն* արձանագրում է բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են հինը՝ հայինը և հայկականը վերանվանվածությամբ ու բռնությամբ այլազգիներին անցած լինելու իրողությունը: Բացառություն չկա. գյուղերի, գետերի, վտակների ու ձորերի, հանգրվանների, սար ու լեռների, տարածքների անունները փոփոխում կամ վերացնում են, վանքերն ու եկեղեցիները տեղի են տալիս մզկիթների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղևոնդ Ալիշանի «Սիսական» գրքի տվյալների փաստարկներով հաստատվում է, որ *հին Աղահեճք գավառն* սկզբնապես եղել է հայկական տարածք՝ հայկական գյուղերով, եկեղեցիներով, շինություններով, ամուր հանգրվաններով և կապ է ունեցել կից գավառների հետ՝ *Ծղուկի, Հաբանդի, Արցախի*:

Պատահական երևույթ չէ, որ *Աղահեճքի* 43 գյուղեր հարկատու են եղել *Սյունիքի* եկեղեցուն, իսկ հարավ-արևելյան տարածքի *Հարարին* մոտ *Արփակերիք, Օձաբերդ (Խժաբերդ)* գյուղերը և *Եկեղեցաձոր* եկեղեցին հարկատու են եղել *Դիզակի* գավառի *Տող* բերդաքաղաքին:

Աղահեճքում արձանագրված այլազգիների՝ գյուղերի, գետերի, սարերի ու լեռների, հանգրվանների անունները հետագայում են առաջացել, ինչպես *Ալիշանն* է նշում, պատերազմների պատճառով՝ *Աղվանից*, այլև տարբեր տեղերից այլազգիների մուտքով *Աղահեճքի* հայազրկության և թուրքանալու այլ եղանակ չկար: Այնտեղ մուտք են գործել մահմեդականներ, քրդեր, տաճիկներ, արաբներ, թուրքեր:

Խորհրդային իշխանության շրջանում՝ սկսած 1920-ական թվականներից, նախկին *Աղահեճքը* *Լաչին էր դարձել և մտնում էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Շուշիի շրջանի մեջ: Ստեփանակերտից և Շուշիից* մինչև *Լաչին* և մինչև *Գորիսի* սահմանը շատ վատ, քանի որ քարափ ճանապարհներ կային:

Երբ *Արցախյան* առաջին պատերազմից հետո՝ 1991-1994թթ., Շուշին, Լաչինը հայացան, վերակառուցվեցին, նոր բնակիչներ, առաջընթաց մշակույթ, նորովի կյանք ու ծաղկունք եղավ:

Ղևոնդ Ալիշանի գիտական բնութագրումներից և մեկնաբանություններից երևում է, որ *Աղահեճք* գավառը ի սկզբանե հայկական տարածք է եղել, հետո մուտք են գործել այլազգիներ, գերազանցապես քրդեր, որոնք աստիճանաբար դարձել են թուրքացած ադրբեջանցիներ, Ադրբեջանի քաղաքացիներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալիշան Ղ. (1893)**, Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար:
2. **Երեմեան Ս. (1902)**, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, Ս. Ղազար:

REFERENCES

1. **Alishan Gh. (1893)**, Sisakan /Sissakan/, Venice, St. Lazar.
2. **Yeremian S. (1902)**, Kensagrowt'yown H. Alishani /Biography of H. Alishyan/, Venice, St. Lazar.

Eduard Mkrtchyan

Today's Lachin is the historical Armenian Agakhech.

Conclusion

Key words and phrases: *Ghevond Alishan, Syunik region, Lachin, Agakhech, villages, Tsitsernavank, Khatsaberd, Armenian territory.*

The arguments of Ghevond Alishan's book "Sisakan" confirm that the old province of Agakhech was originally an Armenian territory with Armenian villages, churches, buildings, strongholds and had connections with neighboring provinces: Tsghuk, Khabandi, Artsakh.

It is no coincidence that 43 villages of Aghachechka were taxpayers of the Syunik Church, and the villages of Arpa-ketik, Odzaberd (Khatsaberd) and the Chrachadzor

Church near Harar in the southeastern region were taxpayers of the fortress city of Tokh in Dizak Marz.

The names of villages, rivers, mountains and landmarks of foreigners, recorded in Agakhechka, arose later, as Alishan notes, due to wars, with the arrival of foreigners from Agvan, but also from different places, there was no other way to determine. To armenize and turkify Agakhechka. Muslims, Kurds, Tajiks, Arabs, Turks entered there.

During the Soviet rule, starting from the 1920s, the former Agakhech became Lachi and was part of the Shusha district of the Nagorno-Karabakh Autonomous Region. From Stepanakert and Shusha to Lachin and to the border with Goris, there were very bad, dilapidated and rocky roads.

When, after the first Artsakh war, in 1991-1994, Shushi and Lachin became Armenian, they were restored, new residents appeared, a developed culture, new life and prosperity.

From the scientific descriptions and comments of Ghevond Alishan, it became clear that the province of Agakhech was originally the territory of Armenia, then foreigners arrived here, especially Kurds, who gradually became Turkified Azerbaijanis, citizens of Azerbaijan.

Едуард Мкртчян

Сегодняшний Лачин – это исторический армянский Агахеч.

Заключение

Ключевые слова и фразы: Гевонд Алишан, Сюникская область, Лачин, Агахечк, села, Цицернаванк, Хцаберд, армянская территория.

Аргументы книги Гевонда Алишана «Сисакан» подтверждают, что старая провинция Агахеч изначально была армянской территорией с армянскими селами, церквями, постройками, сильными опорными пунктами и имела связь с соседними провинциями: Цгуком, Хабанди, Арцахом.

Неслучайно 43 села Агачечка были налогоплательщиками Сюникской церкви, а села Арпа-кетик, Одзаберд (Хцаберд) и церковь Чрачадзор близ Харара в юго-восточном регионе были налогоплательщиками города-крепости Тох Дизакского марза.

Названия сел, рек, гор и ориентиров иностранцев, записанные в Агахечке, возникли позже, как отмечает Алишан, из-за войн, с приходом иностранцев из Агвана, но и из разных мест, другого способа определить не было. Арменизировать и тюркизировать Агахечка. Туда вошли мусульмане, курды, таджики, арабы, турки.

Во время советской власти, начиная с 1920-х годов, бывший Агахеч стал Лачи и входил в состав Шушинского района Нагорно-Карабахской автономной области. От Степанакерта и Шуши до Лачина и до границы с Горисом были очень плохие, ветхие и каменистые дороги.

Когда после первой Арцахской войны, в 1991-1994 годах, Шуши и Лачин стали армянскими, они были восстановлены, появились новые жители, развитая культура, новая жизнь и процветание.

Из научных описаний и комментариев Гевонда Алишана выяснилось, что провинция Агахеч изначально была территорией Армении, затем сюда прибыли иностранцы, особенно курды, которые постепенно стали тюркизированными азербайджанцами, гражданами Азербайджана.

Էդուարդ Մկրտչյան – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմություն, հին հայերեն, բարբառագիտություն: Հեղինակ է 6 գրքի և շուրջ 50 հոդվածի: mkrtchyan.edik.30@mail.ru

Eduard Mkrtchyan - Professor at ASPU named Khachatur Abovyan, Doctor of Sciences in Philology. Scientific interests; history of armenian language, Old Armenian, dialectology. He is an author of 6 books (monographs, university manuals) and around 50 articles. mkrtchyan.edik.30@mail.ru

Едуард Мкртчян – Профессор Государственного университета имени Хачатура Абовяна, д. филол. н.. Научные интересы; история армянского языка, древнеармянский язык, диалектология. Автор 6 книг и около 50 статей. mkrtchyan.edik.30@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 05.12.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 28.12.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.